

**Տ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲԵՂԱ ԿՆՅԱԶՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ
ԻԶԱՎ Ս. ՄԵՂԱՆԻ ՄԱՏՈՒՑՎԱԾ
Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(28 մայիսի 2005 թ.)

«Ճշնարկութեան ձայն Սրբոյն Գրիգորի,
օրինեացոք զլոյս անսկիզբն, բարձր արարէք
զնա յափորհեան»:

(Շարակնոց)

Քրիստոնեական հավատի փառաբանության օրն է այսօր՝ հասկապված Խոր Վիրապում ասդվածային զորությամբ դասներեք դարի ապրած Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ այն դեռից ենելով իրողության վրա:

Հայոց Տրդափ արքան Գրիգորին, որը հրաժարվել էր պաշտամունք մարդուցի հեթանոս շաստվածներին, բազում չարչարանքներից հետո նեփել էր մահապարփների զուրբ:

Այդ ընթացքում Հայոց արքայի ծեռով մարդիրոսվել էին Խոհիմյանց կույսերը, որից հետո արքան պարուհասվել էր: Խոսրովիդուխոր՝ արքայի քոյրը, ասդվածային փեսիլիքից ներշնչված, հավաքում էր, որ նրան միայն Գրիգորը կարող է փրկել: Անցել էր դասներեք դարի, երբ ծառաները եկան այն զուրի մոտ, որում Լուսավորիչն էր, և ի զարման բոլորի՝ դեսան, որ նա ողջ է: Լուսավորչն որուս բերեցին վիրապից: Արքան զղջմամբ ընդառաջ զնաց Ս. Գրիգորին, բժշկվեց նրա ծեռով և ընդունեց քրիստոնեության հրաշագործ ու կենսաբեր զորությունը: Խոկ մինչ մկրտվելը, ինչպես վկայում է Ազարանցեղոս պարմիջը, արքան ասաց. «Եկեւք փութանք Ասքծո կողմից մեզ դրված կյանքի առաջնորդ Գրիգորին հովիվ դարձնել, որպեսզի մկրտությամբ մեզ լուսավորի և նորողի մեր Վրարիչ Ասքծո ամենուուց խորիրդով»:

Այս ամենը մութ ու խավար զուրի մեջ կարծես դեսնում էր Ս. Գրիգորը: Տասներեք դարի անսասան հավաքորդ և հույսով աղոթելով նա հոգևոր այդ լույսն էր խնդրում իր ազգի համար: Տասներեք դարի տորբն անսահման համբերությամբ, անդանելի դառապանքներ կրելով, չէր հուսահարվում և վսրահ էր, որ մահաբեր վիրապից Ասքծո միջնորդությամբ դուրս պիտի զա ու հասպահի հայոց հոգու դաճարի անսասան սյուները: Նրան ի վերուսպ էր դրված այդ առաքելությունը, ինչպես ավելարանական վկայությունն է հասպահում. «Մարդն իրենից որևէ բան չի կարող անել, եթե նրան ի վերուսպ՝ երկնիքից դրված չէ» (Տովի. Գ. 27): Ասքվածային հայդմությունը նրան՝ իր անհողողդ հավաքրի և անմասնությունը նվիրումի պարախանն էր. «Էջ միածինն ի հօրէ և լոյս փառաց ընդ Նմա»:

Լուսավորչի՝ Խոր Վիրապից դուրս զալուց հետո, հայոց ազգը նրա քարոզչությամբ ականջալուր դարձավ Ասքծո խոսքի ճշմարդությանը: Լուսավորչի խոսքը ազգին հայոց կոչ էր դեպի ճշմարդի ասդվածպաշտություն: Նրա պարզամները ձայնն էին Ասքծո

բաղց կանչի դեպի իրական նպաւրակ ու Ասքծո խոսքումներով լեցուն ապագա: Լուսավորչի ասդվածաբարբառ քարոզները ուղղորդում էին հայորդուն դեպի դարեր շարունակ փնտրութեամբ: ճշմարդությունը: ճշմարդության քարոզիչը ուսուցանում էր, որ հեթանոսությունը սիսակ ընթօնում էր ճշմարդության՝ կյանքի հմասիքի փնտրութիք ճանապարհին: Նա ցոյց էր փալիս դիպի կյանքի իրական ճշմարդություն զնալու ճանապարհը և հասդարություն, որ այն Քրիստոս Ասքվածն է:

Լուսավորչի քարոզչությամբ մենք ընդունեցինք Քրիստոսի հայրնած ճշմարդությունը և դարձանք ասդվածների այն ազգը, որ աշխարհում առաջինը քրիստոնեությունը հասդարութեց որպես պետական կրոն: Վիրապի մահարեր խավարը գեղի լուսավորչի կենսաքեր լուսին: Դայ ազգը պարտավորվեց, իբրև ճշմարդության գլուխա, ապրել Ասքծո պարպիրանների համաձայն՝ առարինի կյանքով:

Այսպիս Լուսավորչի ցանած սերմերն ի փառս Ասքծո ընկան պարարտ հողի մեջ և պըդագաբերեցին, իսկ նրա չարչարանաց վայրը՝ Խոր Վիրապը, հայոց համար դարձավ սրբազն ուխտավետի:

Սիրելիներ, այսօր աշխարհը դարձել է մի վիրապ՝ խառնիխուուն դաժան փորձություններով առլեցուն, որոնք հաճախ խանգարում են մեզ կողմնորոշվել կյանքի ճիշդը ուղղության մեջ: Սակայն ո՞րն է այն ճշմարդությունը, որով պետք է շարժվել ու կողմնորոշվել կյանքի զանազան իրավիճակներում:

Քրիստոս ասում է. «Ես եմ ճանապարհը, ճշմարդությունը և Կյանքը» (Տովի. ԺԴ 6): Քրիստոս Ասքված հանդիսանում է մարդկային կյանքի բուն իմաստի ու գերազույն նպաստակի աղբյուրը: Նա հայրնում է մեզ, որ Իր կամքը բացարձակ ճշմարդություն է մեզ համար: Ասքծո կամքը մեզ Իր պարպիրաններն են հայրնում, որոնք մեզ ներկայացնում են մեր գոյության իմաստը, մեր գործունեության ընթացքն ու կյանքի նպատակը: Այդ նպաստակի իրականացման համար Նա հորդորում է մեզ կափարելու Իր կամքը, որը որ կափարյալ իմաստը ու բովանդակություն է հաղորդելու մեր կյանքին:

Քրիստոսի պարպիրանները, որպես բացարձակ ճշմարդություն, ցոյց նն փալիս այս կյանքում մեր իրական պարպականությունները և պարպավորությունները Ասքծո հանդիպ: Մենք պարպավոր ենք ճանաչել ու ըմբռնել ասդվածային ճշմարդությունները և գործադրել դրանք՝ Ասքծո օժանդակությամբ, աղորդի միջոցով Նրա հետ հաղորդակցությամբ:

Ասքծո գորության ներգործությունը մեր էության վրա կպայծառացնի մեր հոգու աշքերը, և առավել պարզ ու հսկակ կիհասկանանք Ասքծո խոսքն ու կամքը: Ասքծո օժանդակությամբ կարող ենք բացահայփել մեր ներքին հոգնոր կարողությունները և զգալ Ասքծո ներկայությունը մեր հոգում ու ասդվածային պարպիրանները ապրումի ու կյանքի վերածել:

Այսօր արժեն, որ մի պահ ինքնարնենության ներքարկենք ինքներս մեզ ու հարցնենք, թե արդյո՞ք մենք հավաքարիմ ենք Լուսավորչի քարոզած ասդվածային ճշմարդություններին: Նավարի՞մ ենք Ասքծուն, կարդի՞մ ենք Իր խոսքը՝ Ասքվաշունքը, ճանաչում ու սիրո՞մ ենք Տեր Շիսու Քրիստոսին ամբողջ հոգով, հնազանդվո՞մ ենք Նրա պարպիրաններին, նվիրեն՝ ենք մեր էությունը Նրան, որպեսզի Նա ապրի մեր մեջ և ուղղորդի մեր կամքն Իր կամքի համաձայն:

Լուսավորչի քարոզած ասրվածային ճշմարդությունները անպարող կիրանեն, եթե մենք մեր սիրոց ջրացենք Աստծո առջև և ջրնդունենք Նրան մեզ Տեր:

Աստծո համար բավարար է միայն հայ լինելն ու քրիստոնյա ազգի մեջ ծնվելը, քրիստոնեական դաստիարակություն սրբանալն ու մկրտված լինելը: Եթե մենք մեզ համարում ենք իրական քրիստոնյա, Քրիստոսի իմանած Եկեղեցու և կրյալ հավաքափոր, ապա արդարագոր ենք ի գին ամեն զրոյության հաղթահարել մեր կոչմանն ու առաքելությանը խոչնորող բոլոր պարնչները, ազնվանալ ու սրբվել Քրիստոսի սուրբ ուսմունքից ճառագած լույսով և ապրել քրիստոնեավայել կյանքով:

Այսօր դժվարին մեր կյանքում, առավել քան երբեւ, խոսուն է Լուսավորչի օրինակը, քանի որ նա մեր պարմության մեջ կարևորագույն դեր ունենալուց զար, օրինակ է յուրաքանչյուրին համար, քրիստոնեության բարոյական չափանիշներով ու սկզբունքներով ապրելու և կյանքը իմաստավորելու հոգեկան խաղաղությամբ և ներդաշնակությամբ:

Այսօր շաբ ու շաբ խնդիրներ մենք ինքներս ենք փորձում լուծել, առանց Աստծո, որի արդյունքում սխալ եզրակացության ենք հանգում և առավել դատասցնում մեր կյանքը: Աստված ցանկացած պահի պատրաստ է մեզ զորակցության ձեռք մեկնել և փոխել մեր կյանքի ընթացքը դեպի իրական երջանկություն: Խոնարհվենք Աստծո կամքի առաջ, հպատակվենք Նրա պարզամներին, փոխենք մեր մոփեցումները կյանքի երևոյթների նկարմամբ Աստծո պարզիքաններին համապարախան: Ունենանք Աստծո խոսքով պայմանավորված աշխարհայցք և ապրենք Նրա կողմից մեզ թեկադրված սկզբունքներով: Այդպես միայն կարող ենք գնահատել մեր անցյալի ժառանգությունը, այդպես միայն կարող ենք դառնալ Լուսավորչի հավաքարիմ հետքնորդները:

Թող Սուրբ Լուսավորիչն օգնական և բարեխոս լինի բոլորին, որպեսզի մենք այնքան ազնվացնենք մեր հոգին, որ կարողանանք գենսնել Լուսավորչի կանթենի լույսը, որը ճառագում է միաձնաէջ խորիրդով: Եվ թող այդ մաքրագործող լույսը ուղեկից դառնա մեր ազգին և մշտապես ուղղորդի նրա քայլերը դեպի երջանիկ և ասպահահասդրաստ ապագա այժմ և միշտ և հավիրյան հավիրենից: ամեն: